



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՆ



Կիրակի, Մեպտեմբեր 11, 2011-ին տոնախմբուեցաւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնը, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագով եւ ապա մատաղօրհնէջի արարողութեամբ:

Առաւօտեան ժամը 11:00-ին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, «Հրաշափառ»-ի երգեցողութեամբ եւ թափօրով մուտք գործեց եկեղեցի եւ սկսաւ Ս. Պատարագը:

Եկեղեցին լեցուած էր խումներամ բազմութեամբ: Հաւատացեալներու կողքին ներկայ էին շրջանի երեսփոխաններ, Ազգ. Վարչութեան անդամներ, բարերարներ եւ գաղութիս մեջ գործող միութեանց ներկայացուցիչներ:

Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը: «Հայր Մեր»էն առաջ, Սրբազան

Հայրը իր պատգամը ուղղեց ներկայ հաւատացեալներուն: Սրբազանը պատգամի աւարտին անդրադարձաւ Մեպտեմբեր 11, 2011-ի ահաբեկչական արարքին 10րդ տարելիցին մասին եւ հրաւիրեց ժողովուրդը, որ մասնակից ըլլան Տէր Ողորմեայի աղօթքին գոհերու յիշատակին:

Պատարագիչ Սրբազան Հայրը նաեւ ներկաներուն յիշեցուց Վեհափառ Հայրապետի հովուապետական այցելութեան եւ այս եկեղեցւոյ 30-ամեակի եւ 90-ամեակի տօնակատարութեան մասին, յառաջիկայ Հոկտեմբեր 23-ին: Պատգամի աւարտին, Սրբազան Հայրը շնորհաւորեց եկեղեցւոյ հովիւները, հոգաբարձութիւնը, երեսփոխանական կազմը,

դպրաց դասը եւ Տիկնանց Միութիւնը, Ս. Խաչի տօնին եւ եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւն եւ ապա ռեհանի օրհնութիւն:

Ապա պատարագիչ Սրբազան Հայրը թափօրով ուղղութեաւ «Բաղրամեան» սրահ ուր կատարուեցաւ մատաղի օրհնութիւնը եւ բաշխումը: Նաեւ տարիներու գեղեցիկ աւանդութեամբ, «Բաղրամեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, կազմակերպութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմին, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հիւրերու, եւ գաղութիս հաւատացեալներու:

FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS AND NAME DAY OF HOLY CROSS CATHEDRAL CELEBRATED



On Sunday, September 11, 2011, the Armenian Church celebrated the Feast of the Exaltation of the Holy Cross. This feast is also the name day of Holy Cross Cathedral of Montebello.

On these occasions, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and

presided over the blessing of the *madagh* at Holy Cross Cathedral.

During his sermon, the Prelate reflected on the 10th anniversary of the September 11, 2001 attacks and invited the faithful to pray for the souls of the victims during *Der Voghormya*.

The Prelate also spoke of the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I and announced that His Holiness will celebrate with the parish community the 30th anniversary of Holy Cross Cathedral and the 90th anniversary of Holy Cross Church on October 23rd.

The Prelate concluded his sermon by congratulating the Pastors, Board of Trustees, Delegates, Ladies Guild, and church servants on the name day of Holy Cross Cathedral and wished them success in their service.

The *Antasdan* service (the blessing of the four corners of the earth) and the blessing of basil was held at the conclusion of Divine Liturgy, after which the Prelate was led in a procession to "Bagramian" Hall for the blessing of *madagh*.

A reception organized by the Parish Ladies Guild followed at "Bagramian" Hall.